

**Կառավարության սուբվենցիոն ծրագրերով Նոր Հաճրնում
հիմնանորոգվում են ներհամայնքային ճանապարհահատվածներ, շենքերի
մուտքեր, տանիքներ, կառուցվում են ջրահեռացման, կոյուղու
համակարգեր**

Շարունակվում են ՀՀ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանի աշխատանքային այցերը մարզի համայնքներ՝ տեղում ծանոթանալու պետական և այլ ծրագրերով իրականացվող աշխատանքներին ու համայնքների ղեկավարների հետ քննարկելու համայնքային խնդիրները:

Հերթական այցով մարզպետը Նոր Հաճրն խոշորացված համայնքում էր: Համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանի ու մարզպետարանի ոլորտային պատասխանատուների հետ մարզի ղեկավարը դիտարկել է կառավարության 2022 թվականի սուբվենցիոն ծրագրով այս պահին Նոր Հաճրնում ընթացող ներհամայնքային ճանապարհահատվածի կապիտալ հիմնանորոգման աշխատանքները:

Պետություն-համայնք՝ 35% / 65% համաֆինանսավորմամբ հիմնանորոգվում է համայնք մտնող շուրջ 2,5 կմ երկարությամբ գլխավոր ճանապարհահատվածը:

Ահարոն Սահակյանը գրուցել է շինարարների հետ և հորդորել խստագույնս հետևել իրականացվող աշխատանքների որակին, ու դրանք ավարտել ծրագրով սահմանված ժամկետներում:

Այս տարի Նոր Հաճրնից ընդհանուր առմամբ 7 սուբվենցիոն ծրագրեր են հաստատվել, որոնց մի մասն ավարտվել են, մյուսներն ընթացքի մեջ են:

Մասնավորապես,

Արգելում և Գետամեջում ավարտվել են ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքները, Մրգաշենում ընթացքի մեջ են ջրահեռացման ցանցի կառուցման, իսկ Քանաքեռավանում կայուղու կառուցման ծրագրերը:

Մրգաշեն և Արգել բնակավայրերում ընթացքի մեջ են նաև բազմաբնակարան շենքերի մուտքերի և տանիքների հիմնանորոգման աշխատանքները, Նոր Արտամետում էլ ընթանում է կոյուղագծերի վերակառուցման ծրագիրը:

Աշխատանքային այցի շրջանակում մարզպետն այցելել է նաև Նոր Հաճրնի Մեծն Մուրադի անվան թիվ 4 հիմնական դպրոց, շրջել տարածքում, ծանոթացել ընթացիկ աշխատանքներին, սննդի կազմակերպման պայմաններին, տնօրենի հետ քննարկել դպրոցի խնդիրներն ու ծրագրերը: